Արարաս ամսագրի յարգելի խմբագրութեան.

Խնդրում եմ՝ սոյն տողերը զետեղել պատուական ամսագրիդ էջերում։

Նոր-Նախիջևանցի տիկին Յուստինէ Պաղտիկեան Սարըեան՝ ի յիշատակ իւր սիրելի հանգուցեալ Մատթէոս որդու, նուիրած էր ս. Էջմիածնի Մայր Աթոռին մի հարիւր (100) ռուբլի և խնդրած էր, որ ամեն տարի ս. Աւետարանչաց տօնի օրը հոգեհանգիստ կատարուի Մայր տաճարում իւր որդու համար։ Նուիրատուի խնդրանաց համաձայն ս. Էջմիածնի Սինօդի հրամանով՝ տարուայս հոկտեմբեր ամսի 19-ին, ս. Աւետարանչաց տօնի օրը, ս. Պատարագից յետոյ Մայր Աթոռոյս միաբանութեան և բազմաթիւ աղօթաւոր ժողովրդի ներկայութեամբ հոգեհանգիստ կատարուեց Նոր Նախիջևանցի հանգուցեալ Մատթէոս Սարըեանի համար։ Թող Աստուած միխիթարէ վշտացեալ բարեպաշտ Յուստինէ տիկնոջ սիրտը և նորա հանգուցեալ զաւակի հոգին արժանի անէ երկնից աջքայութեան։

Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս.

4 Նոյեմբերի 1913 ամի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը և Կենդրոնական Յոբելենական Յանձնաժողովը պարտք են համարում իրենց խորին շնորհակալութիւնը յայտնել այն բոլոր ազգային կուլտուրական, կրթական, բարեգործական, հասարակական հիմնարկութիւններին, նահանգապետին, գաւառապետին և պետական այլ պաշտօնեաներին, մամուլին, հոգևոր և աշխարհական անձանց, Ռուսական համալսարաններին, Կովկասի պետական ժողովրդական դպրոցների տեսուչներին, որոնք նիւթապէս թէ բարոյապէս, անձամբ թէ գրաւոր բարեհաճել են շնորհաւորել Թեմական Դպրանոցի 75-ամեայ յոբելեանը։

Նախագահ Հոգաբարձութեան և Կենդրոնական Յոբելենական Յանձնաժողովի՝ Զաւէն վարդապետ

Քարտուղար՝ Գր. Ղարագեօզեանց

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ,

«Արարատ»ի տարեոյս հոկտեմբերի համարում առանձին յաւելուածով տպագրուած է Յոբելենական հանդէսների նկարագրութիւնը, որի մէջ յիշատակուած են այն բոլոր պատգամաւորներն ու հեռագրները, որոնք տօնի առթիւ ուղարկուած են եղել ս. Էջմիածին։ Սակայն ոչ մի տեղ յիշատակուած չէ, թէ այդ Մեծ Տօնին մասնակից է եղել նաև Տագանրոգի հայ համայնքը, որը յատուկ հեռագրով խնդրել էր ինձնից՝ տեղի հայ գաղութի զգացմանց թարգման հանդիսանալ նորին Վեհափառութեան Ազգի Սրբազնագոյն Հայրապետի առաջ։ Այդ հեռագիրը յանձնել եմ Յոբելենական Յանձնաժողովի քարտուղար բարձ. Տէր Գէորգ վարդ. Զէորէքչեանին։

Մուշէ վարդապետ

16/XI, 13 թ.
ս. Էջմիածին.